ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Հայրապետը իւր մահից առաջ բարձրագոյն հաստատութեան է առաջարկել սինոդի անդամութեան համար Քիշնևի Հայոց առաջնորդ տ. Ներսէս արքեպիս. Խուդավերդեանցին, որ սինոդի անդամներից բոլորից աւագը լինելով ըստ ծեռնադրութեան՝ կլինի նաև կաթուղիկոսական տեղապահը։ Իսկ մինչև կայսերական հաստատութիւնը՝ սինոդի որոշումով տեղապահ է հրատարակուած այժմեան աւագ անդամ տ. Գէորգ արքեպ. Սուրենեանը։

— Գ. Ա. Ահարոնեանը կառավարութիւնից հաստատուած է Ներսիսեան դպրոցի տեսուչ։

— Թիֆլիսում բացուած են հայկական բարձրագոյն կուրսեր։

— Ատրպատականի Հայոց առաջնորդ ընտրուել է տ. Կարապետ ծ. վ. Տէր-Մկրտչեանը։

— Համակրողների մէջ միտք է յղացուել տօնել Լէօ-Ա. Բարխանեանի գրական գործունէութեան և Եղնիկ ա. ք. Երզնկեանի քահանայութեան յօբելեանները։

— Վերսկսուեցաւ «Մշակ» լրագրի հրատարակութիւնը, որ դադարել էր տպարանի փակման պատճառով։

— «Մուրճ» ամսագիրը յայտարարել է Մշակում, որ նիւթական միջոցների պակասութեան և այլ յարգելի պատճառներով դադարեցնում է իւր գոյութիւնը։